ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԶՈՐԱՄԱՍ

Հունվարի 28-ին հայոց բանակի կազմավորման և հայրենյաց պաշտպանի օրվա առթիվ Արցախի պետական համալսարանի մի խումբ ուսանողներ այցելել են N զորամաս: Ուսանողները շրջայց են կատարել զորամասի տարածքում՝ ծանոթանալով զինվորների առօրյային և պայմաններին:

ԱՐՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, ողջունելով ՊԲ անձնակազմին և զինվորներին, կարևորել է օրվա խորհուրդը՝ նշելով, որ ժամանակակից աշխարհում գոյատևելու և պետությունը պաշտպանելու համար անհրաժեշտ է մարտունակ բանակ:

«Հայոց բանակը մեր պետականության միակ հուսալի երաշխավորն է: 28 տարի իր գոյությամբ և իր մարտունակությամբ կարողացավ ապացուցել, որ լիարժեքորեն ապահովում է իր առջև դրված խնդիրները»,- ասել է նա:

Զինծառայողներին շնորհավորել է նաև ԱՐՊՀ ուսանողական խորհրդի նախագահ Լիլիթ Մարգարյանը. «Դժվար էր ռազմական գործողություններին զուգընթաց բանակ կառուցելը: Անցնելով թե պատերազմի և թե բանակաշինության փորձությունները՝ մեր բանակը կոփվեց և դարձավ անկախ պետականության կարևորագույն երաշխիքը, հայ ժողովրդի արդարացի հպարտության և ոգևորության աղբյուրը», - ասել է նա:

Ուսանողները հանդես են եկել ազգագրական կատարումներով՝ զինծառայողների օրը դարձնելով տոնական:

ՑԱՎԱԿՑՈՒՄ ԵՆՔ

ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԵԼ Է ԱՐՊՀ ՊՐՈՖԵՍՈՐ, Փ.Գ.Թ. ՇԱՀԵՆ ՄԻՔԱՅԵԼԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ

87 տարեկանում կյանքից հեռացել է փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԱՐՊՀ պրոֆեսոր Շահեն Միքայելի Աբրահամյանը:

Շահեն Միքայելի Աբրահամյանը ծնվել է 1933 թ. հունվարի 22-ին ԼՂՀ Շուշիի շրջանի Քարինտակ գյուղում: Ավարտելով տեղի 7-ամյա դպրոցը և Շուշիի մանկավարժական ուսումնարանը՝ 1952 թ. ընդունվել է Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտը, որն ավարտելուց հետո աշխատանքի է անցել ծննդավայրի դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

1959-74 թթ. աշխատել է կոմերիտական և կուսակցական մարմիններում:

1969-1970 թթ. զբաղեցրել է Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրենի պաշտոնը:

1974 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ և ստացել փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1969 թ-ից աշխատել է Արցախի մայր բուհում՝ որպես փիլիսոփայության դասախոս՝ տարբեր տարիների զբաղեցնելով նաև ամբիոնի վարիչի և պատմաբանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնները:

1994 թ. նրան շնորհվել է դոցենտի, 2006թ.՝ ԱՐՊՀ պրոֆեսորի կոչում:

Շահեն Միքայելի Աբրահամյանը գիտության ոլորտում ունեցած նվաճումների համար արժանացել է մի շարք պետական պարգևների՝ պարգևատրվելով «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, ԼՂՀ վարչապետի հուշամեդալով, ԱՐՊՀ «Ոսկե մեդալ»-ով: Հեղինակել է տասնյակ գիտական և հրապարակախոսական աշխատանքներ:

Շահեն Միքայելի Աբրահամյանն իր գործունեության բոլոր բնագավառներում աչքի է ընկել որպես բարեխիղճ, պատասխանատու, սկզբունքային, հայրենասեր քաղաքացի և մտավորական՝ վայելելով իր գործընկերների, ուսանողների, համերկրացիների սերն ու հարգանքը:

Արցախի պետական համալսարանի ողջ անձնակազմը խոր վշտով սգում է սիրելի գործընկերոջ մահը և իր զորակցությունը հայտնում նրա հարազատներին:

Շահեն Միքայելի Աբրահամյանի հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր՝ Զ. Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ. (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին:
Այցելի՛ր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 01 (224)
հունվար-փետրվար, 2020

ԱՐՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է 2018-2019 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 20-ին կայացել է ԱՐՊՀ խորհրդի նիստը, որի ընթացքում ԱՐՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը ներկայացրել է հաշվետվություն՝ 2018-2019 ուստարում կատարած աշխատանքների մասին:

ԱՀ պետնախարար, ԱՐՊՀ խորհրդի նախագահ Գրիգորի Մարտիրոսյանը, ողջունելով ներկաներին, նախ շնորհավորել է Արցախի վերածննդի օրվա առթիվ, ապա անցել նիստի օրակարգային հարցերին:

Նիստին ներկա էին նաև ԱՐՊՀ խորհրդի կազմում չընդգրկված պրոռեկտորներ, դեկաններ, այլ ստորաբաժանումների ղեկավարներ:

Օրակարգի առաջին հարցով ներկաները լսել են ԱՐՊՀ ռեկտորի հաշվետվությունը՝ 2018-2019 ուստարում կատարած աշխատանքների մասին, որոնք իրականացվել են կրթական, համագործակցության, ուսանողների հետ տարվող աշխատանքների, սոցիալական քաղաքականության և ֆինանսատնտեսական ուղղություններով:

2018-2019 ուսումնական տարում Արցախի մայր բուհն իր գործունեությունը կազմակերպել և իրականացրել է ԱՐՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրներին և նպատակներին համապատասխան՝ առաջնորդվելով իր կողմից որդեգրված առաքելության դրույթներով: 2019թ. մարտի 5-ի խորհրդի նիստում հաստատվել է ԱՐՊՀ զարգացման ռազմավարական նոր ծրագիրը, որին համապատասխան՝ կազմվել է ժամանակացույց-պլան, որով նախատեսված բոլոր 6 նպատակների իրագործմանը միտված խնդիրների ուղղությամբ կատարվել են որոշակի աշխատանքներ:

«Չնայած առկա բազմաթիվ խնդիրներին՝ արդյունավետ աշխատանքներ են իրականացվել ուսումնական գործընթացի բարելավման, կրթության բովանդակության հարստացման, դասավանդման որակի բարձրացման, մեթոդների արդիականացման և այլ ուղղություններով: Հիմնովին փոխվել և գիտխորհրդի կողմից հաստատվել են բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական բոլոր պլանները՝ հնարավորինս համապատասխանեցնելով բարձրագույն կրթության և աշխատաշուկայի արդի պահանջներին»,-նշել է ռեկտորը:

Գիտության ուղղությամբ կատարված աշխատանքները ներկայացնելուց հետո ռեկտորն ընդգծել է, որ համալսարանի հիմնական նպատակը շարունակում է մնալ նրա գիտական ներուժի ուղղորդումը տնտեսության զարգացման և հասարակության բարեկեցության բարձրացման գործում, դասախոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներում: ԱՐՊՀ հեռահար նպատակը որպես գիտական առաջատար օղակի կայացումն է, կրթական և գիտական գործունեության հավասարակշռումը, ինչը մեր պայմաններում բավականին բարդ է:

Գիտության ոլորտում շարունակվել են աշխատանքներ իրականացվել դասախոսների մասնագիտական աճին ուղղված: Ռեկտորի խոսքով՝ համալսարանն իր ռազմավարական ծրագրում կարևորում է գիտական գործունեության զարգացմանն ուղղված աշխատանքները՝ որպես նպատակ հռչակելով «Տարածաշրջանային հետազոտությունները Արցախի հիմնախնդիրների լուծման գերակայությամբ»:

«Այդ նպատակին հասնելու համար առանձնացված խնդիրների լուծման ուղղությամբ կատարվել են որոշակի աշխատանքներ: Հատկապես կարևորվում է գիտության համար նախատեսվող պետական հատկացումների ավելացման հարցը. նախորդ տարիների համեմատ 2019թ. գիտության հատկացումները եռակի ավելացել են»,-ասել է ռեկտորը:

1 ➥

➥ 2 Խոսելով ձեռքբերումներից՝ ռեկտորն ընդգծել է հավատարմագրման նախապատրաստմանն ուղղված լուրջ աշխատանքները, իրականացրած ինքնավերլուծությունը և հատկապես այն հանգամանքը, որ ԱրՊՀ-ն համագործակցության պայմանագրեր ունի 47 բուհերի, գիտական և այլ կառույցների հետ:

ԱրՊՀ ռեկտորը ներկայացրել է նաև հաշվետու տարում իրականացված տարաբնույթ միջոցառումները, գիտաժողովները, հրատարակված աշխատությունների թիվը, բուհում գործող կենտրոնների, լաբորատորիաների կողմից կատարված և մյուս աշխատանքները:

Խոսելով առկա խնդիրների մասին՝ բուհի ղեկավարը նշել է, որ գիտությունը երիտասարդ կադրերին չի հրապուրում, տնտեսությունից առանձին հետազոտական պատվերներ չեն ստանում, համալսարանի՝ դրանից ստացված եկամուտները շարունակում են մնալ զրոյական, ՀՀ դրամաշնորհային ծրագրերին դասախոսների մասնակցությունը՝ չիրականացված:

«Չնայած քաղաքակիրթ աշխարհը գործում է «կրթությունն առանց սահմանների» կարգախոսով, սակայն ԱՀ բուհերը կղզիացված վիճակում են պետության չճանաչված լինելու պատճառով, և արտերկրի բուհերի հետ շփումները հնարավոր է լինում իրականացնել ՀՀ բուհերի միջնորդությամբ»,-նշել է ռեկտորը:

ԱրՊՀ ռեկտորը շնորհակալություն է հայտնել երկրի ղեկավարությանը՝ ԱրՊՀ-ն մշտապես իր ուշադրության առանցքում պահելու համար:

Ֆինանսական տարվա մասին հաշվետվությամբ հանդես է եկել ԱրՊՀ գլխավոր հաշվապահ Նարինե Գրիգորյանը: Հաշվետու տարում ուսխորհրդի կատարած աշխատանքի մասին հաշվետվություն է ներկայացրել ուսխորհրդի նախագահ Լիլիթ Մարգարյանը:

Ելույթներով հանդես են եկել ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դեկան Շ. Այդինյանը, տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ռ. Մանգասարյանը, ԱՀ ԿԳՍ նախարարության աշխատակազմի մասնագիտական կրթության և գիտության բաժնի վարիչ Լ. Ղարախանյանը, ովքեր բարձր են գնահատել ԱրՊՀ ռեկտորի կատարած աշխատանքը:

Արդյունքում ԱրՊՀ 2018-2019 ուստարում կատարած աշխատանքները գնահատվել են բավարար:

ԿԱՅԱՑԵԼ Է ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Փետրվարի 28-ին կայացել է ԱրՊՀ գիտխորհրդի նիստ, որտեղ քննարկվել են մագիստրատուրայի և ասպիրանտուրայի մասնագիտությունների ու կրթական ծրագրերի վերաբերյալ հարցեր, տպագրության երաշխավորվել աշխատություններ:

2019-2020 ուսումնական տարվա մագիստրոսական թեզերի /հեռակա ուսուցման համակարգ/ պաշտպանության արդյունքների մասին տեղեկատվություն է ներկայացրել ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը՝ նշելով, որ նախորդ ուսումնական տարվա համեմատ հանձնաժողովի նախագահները ընդարձակ հաշվետվություն են գրել՝ ընդգծելով իրենց գոհունակությունը պաշտպանության արդյունքներից:

Օրակարգի մյուս հարցով գիտխորհուրդը հաստատել է ֆիզիկայի ամբիոնի դոցենտի պաշտոնակատար Մելս Վաչագանի Մինասյանին ԱրՊՀ «Ոսկե մեդալ»-ով պարգևատրելու մասին հարցը, որը ներկայացրել է ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը:

Օրակարգի հաջորդ հարցով գիտխորհուրդը հաստատել է 2020-2021 ուսումնական տարվա մագիստրատուրայի և ասպիրանտուրայի մասնագիտությունների և կրթական ծրագրերի, դրանց և բակալավրիատի կրթական ծրագրերի համապատասխան տեղերի պլանավորման ու լիազոր մարմին ներկայացնելու մասին հարցը:

Գիտխորհուրդը տպագրության է երաշխավորել մեկ ուսումնական ձեռնարկ, մեկ ուսումնամեթոդական ուղեցույց, հաստատել ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ Ժիրայր Իշխանյանի ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանի ու պատմության և քաղաքագիտության ամբիոնի հայցորդ Ռադա Ավետիսյանի ատենախոսության թեմայի մասին հարցերը:

ԱրՊՀ-ՈՒՄ ՆՇՎԵԼ Է ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՍԵՐԳԵՅ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ 95-ԱՄՅԱԿԸ

Փետրվարի 14-ին ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Հասմիկ Ղազարյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված հայ լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անվանի հայագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի ծննդյան 95-ամյակին:

Միջոցառմանը ներկա էին ֆակուլտետի ուսանողներ և դասախոսներ:Ուսանողներն ու դասախոսներն իրենց ելույթներում ներկայացրին Սերգեյ Աբրահամյան մարդուն և գիտնականին, նրա գիտական վաստակը՝ մեկ անգամ ևս արժևորելով Ս.Աբրահամյանի ավանդը հայ լեզվաբանության զարգացման գործում:

Ողջունելով ներկաներին՝ բ.գ.թ., դոցենտ Հասմիկ Ղազարյանն իր ելույթում հուշեր է պատմել Սերգեյ Աբրահամյանի մասին: Անվանի լեզվաբանը եղել է նրա թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարը, ում հետ ծանոթացել է 1993 թվականին:

«Ես ինձ երջանիկ մարդ եմ համարում, որ բախտ եմ ունեցել ճանաչելու նրան: Նա մեծ հայրենասեր էր, ապրեց հայրենիքի սիրով ու կարոտով»,-նշել է նա՝ ընդգծելով, որ մեծ է Ս.Աբրահամյանի վաստակը նաև ԱրՊՀ հայոց լեզվի ամբիոնի զարգացման գործում: Ամբիոնի դասախոսներից հինգի թեկնածուական ատենախոսությունը ղեկավարել է հենց Ս.Աբրահամյանը:

«Սերգեյ Աբրահամյանի կերպարի գլխավոր և վսեմ հատկանիշներն են՝ անձնուրաց նվիրվածություն գիտության ընտրած ճյուղին, դպրոցին ու կրթությանը, անհանգիստ ու պրպտող միտք, ամենաբարդ երևույթները հստակ ներկայացնելու բնատուր ձիրք, անսպառ բարություն, զգայուն սիրտ ու բարյացակամություն, լայնախոհ հայրենասիրություն, հոգատարություն, ուսանողներին ու ասպիրանտներին իր գիտելիքները մինչև վերջ նվիրաբերելու պատրաստակամություն»,-ասել է Հ.Ղազարյանը:

Ակադեմիկոսի մասին ներկաների հետ իր հուշերն է կիսել նաև ԱրՊՀ հայոց լեզվի ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.թ. Օֆելյա Բաբայանը:

«Մեծ գիտնական Սերգեյ Աբրահամյանին առաջին անգամ տեսել եմ 1983 թվականին: Ես շատ ուրախացա, որ նա դարձավ իմ աշխատանքի գիտական ղեկավարը: Նա մարդկային բարեմասնություններով օժտված մեղմ ու բարի անձնավորություն էր, հումորով շաղախված պարզ ու անկեղծ տումեցի, սիրված ու հարգված գործընկեր և ղեկավար»,-նշել է Օֆելյա Բաբայանը:

Սերգեյ Աբրահամյանի մարդկային որակների, գիտական գործունեության, իր ասպիրանտների հանդեպ ունեցած առանձնահատուկ հոգածության մասին իր ելույթում ընդգծեց նաև հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Սիլվա Մինասյանը՝ պատմելով նաև հուշեր Ս. Աբրահամյանի հետ ունեցած հանդիպումներից:

ԱրՊՀ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Հերմինե Արզումանյանը, իր խոսքում կարևորելով Ս.Աբրահամյանի գիտական աշխատությունների նշանակությունը ուսանողների համար, նշել է, որ մեծ գիտնականի լեզվաբանական աշխատություններն ուղեկցում են տվյալ ուղղությունն ընտրած ուսանողներին ամբողջ ուսումնառության ընթացքում, քանի որ դրանք մատչելի են ուսանողների համար գիտականորեն հագեցած լինելու պատճառով:

Միջոցառման ավարտին ներկաները դիտել են «Սերգեյ Աբրահամյան. Հին լեզվի նոր պահապանը» ֆիլմը:

Նրա հիմնական աշխատությունները վերաբերում են արդի հայերենի կառուցվածքին, ոճաբանությանը, բառարանագրությանը, լեզվի ուսումնասիրման մեթոդաբանությանը, հայերենի կանոնարկման, լեզվաքաղաքականության, լեզվի ուսուցման հիմնահարցերին: Զբաղվել է ժամանակակից գրական հայերենի կառուցվածքի նկարագրության, նրա պատմության ու ավանդման մեթոդիկայի, ինչպես և խոսքի մշակույթի բարձրացման հարցերով. կատարել է բառարանագրական աշխատանք: Արժեքավոր ներդրում ունի հատկապես հայերենի խոսքի մասերի գիտական քննության, շարահյուսության առանցքային խնդիրների մշակման, դասագրքերի (ձեռնարկների) պատրաստման բնագավառներում: Գրել է գիտամեթոդական բնույթի բազմաթիվ հոդվածներ:

Սերգեյ Աբրահամյանը մահացել է 2005 թ.-ին: Նրա անունով են կոչվում ծննդավայրի՝ Տումիի միջնակարգ դպրոցը և Արցախի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնը:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ ՆՇՎԵԼ Է ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 90 ԵՎ ԳՐԱԿԱՆ-ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 70-ԱՄՅԱԿԸ

Հունվարի 22-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում նշվել է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ, բանաստեղծ, թարգմանիչ, ՀՀ և ԱՀ գրողների միության անդամ Սոկրատ Խանյանի ծննդյան 90, գրական-գիտամանկավարժական գործունեության 70-ամյակը:

Միջոցառմանը շնորհավորական խոսքով հանդես է եկել ԱՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը:

«Ինձ ու սերնդակիցներիս համար մեր ուսանողության տարիներին Սոկրատ Խանյանը արդեն մեծ անուն և հեղինակություն էր ոչ միայն Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում, այլև նրա սահմաններից դուրս: Իր գիտական- մանկավարժական գործունեության արդյունքում է, որ այսօր էլ ԱրՊՀ-ում «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություններում են գիտական գործունեությամբ շարունակել իր ուսանողները»,- ասել է Աշոտ Ղուլյանը՝ հավելելով, որ գրողի բնավորության ամենաընդգծված գիծը լավատեսությունն է, որի հիմքում Արցախի երիտասարդների հետ հաճախակի հանդիպումներն են:

Հոբելյարին շնորհավորական ուղերձ է հղել ԱՀ Կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը՝ կարևորելով գրողի ունեցած ներդրումը Խորհրդային տարիներին Բաքվի հայ երիտասարդներին հայ պահելու գործում: «Արժանահիշատակ է Ս.Խանյանի գործունեությունը նաև նորանկախ Արցախում. պատերազմի վերքերից ապաքինվող փոքրիկ հայրենիքում նոր գաղափարներով և ազգային մտածելակերպով օժտված սերունդների կերտող ազգային դպրոցի կայացմանը լծվեցիք անվերապահորեն»,- նշվում էր ուղերձում:

ԱրՊՀ ողջ կոլեկտիվի անունից Սոկրատ Խանյանին շնորհավորել է համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանը:

«Այսօր ԱրՊՀ-ում աննախադեպ տոն է այն առումներով, որ հոբելյարը 90 տարեկանում նույն եռանդով շարունակում է իր աշխատանքն ու գործունեությունը ինչպես տասնամյակներ առաջ, նա ԱրՊՀ ստեղծման առաջին իսկ օրից դասախոսում է համալսարանում»:

ԱրՊՀ ռեկտորի հրամանի համաձայն բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ Խանյանին շնորհվել է ԱրՊՀ պատվավոր պրոֆեսորի կոչում:

ԱՀ Մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության անունից հոբելյարին շնորհավորել է նախարար Լեռնիկ Հովհաննիսյանը՝ նշելով, որ գրողի ստեղծագործությունները նվիրված են մշակույթին, արվեստին, հայրենիքին և գիտությանը:

Միջոցառմանը զեկուցմամբ և ելույթներով հանդես են եկել բ.գ.թ., ԱրՊՀ պրոֆեսոր Անահիտ Աթայանը, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի ռեկտոր Դոնարա Գաբրիելյանը, բ.գ.դ., Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր Վանո Եղիազարյանը, բանաստեղծներ, թատերագետ Կարինե Ալավերդյանը, Ս.Խանյանի որդի Համլետ Խանյանը, հրապարակվել է Գորիսի պետական համալսարանի ռեկտորի շնորհավորական ուղերձը:

Երեկոյին հնչել են հեղինակի ստեղծագործություններից ասմունք և գործիքային կատարումներ:

Սոկրատ Խանյանը շնորհակալություն է հայտնել միջոցառման ներկաներին՝ ընդգծելով, որ յուրաքանչյուր նման միջոցառում խոսում է պետության հզորության մասին:

«Մեր գրիչը, մեր տաղանդը, մեր շնորհը պետք է ծառայի մեր պետության հզորությանը, ժողովրդի միասնությանը, գալիք սերունդների ապահով և հավերժական կյանքին»,-նշել է Ս. Խանյանը:

ԱրՊՀ ԵՎ ԳՊՀ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հիմք ընդունելով միջբուհական համագործակցության ապահովման, գիտատեխնիկական և կադրային կարողությունների լիարժեք օգտագործման և առաջավոր փորձի փոխանակման անհրաժեշտությունը՝ հունվարի 23-ին ԱրՊՀ-ում Արցախի պետական և Գորիսի պետական համալսարանների միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, կարևորելով համագործակցության հուշագրի կնքումը, նշել է, որ փաստաթղթով ամրագրվում են այն կարևոր կետերը, որոնք առանցքային են գիտակրթական կյանքն արդյունավետ կազմակերպելու գործում:

Իր հերթին Գորիսի պետական համալսարանի պրոռեկտոր Թեհմինա Մարությանը հուշագրի կնքումը կարևորել է նաև Սյունիք-Արցախ տարածաշրջանային գիտակրթական կապերի ամրապնդման, հարավային ակադեմիական միջավայրի ձևավորման կարևորության և ռազմավարական նշանակության տեսանկյունից:

«ԱրՊՀ-ի հետ Գորիսի պետական համալսարանի համագործակցությունը տարիների պատմություն ունի, և այս հուշագրով այդ համագործակցությանը փաստաթղթային վավերացում ենք տալիս»,-նշել է Թ. Մարությանը:

Հուշագրով ամրագրվում է համատեղ ծրագրերի, միջոցառումների իրականացում, պրոֆեսորադասախոսական կազմի անդամների ակադեմիական շարժունության իրականացում, կրթական ծրագրերի համատեղ մշակում, դասախոսների մասնագիտական վերապատրաստում, ԱրՊՀ-ի և ԳՊՀ-ի գիտական ամսագրերում համատեղ ուսումնագիտական հետազոտությունների արդյունքների հրատարակում, ուսանողների գիտահետազոտական, ուսումնական արտադրական պրակտիկաների փոխադարձ կազմակերպում, համատեղ գիտաժողովների կազմակերպում և այլ ուղղություններով համագործակցություն:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՁԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԴՆԵԼ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում Արցախի պետական համալսարանում գիտական և միջազգային համագործակցության գծով կազմակերպվել են գիտաժողովներ, գիտական սեմինարներ, տպագրվել հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ, ստորագրվել համագործակցության հուշագրեր:

«Գիտությունը այն ոլորտն է, որը ստեղծում է գիտական նորույթ և որի ուղղությամբ բազմաթիվ անելիքներ ունենք: ԱրՊՀ-ում գիտությունը զարգացնելու և հաջողություններ գրանցելու համար անհրաժեշտ է ուսումնական գործընթացում օգտագործել և ներդնել գիտահետազոտական վերջին նորարարությունները, որի շնորհիվ կկարողանանք բարձրացնել արդյունավետությունը տվյալ ոլորտում»,- ասել է ԱրՊՀ գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը:

Խոսելով ձեռքբերումների մասին՝ պրոռեկտորը նշել է, որ բուհը ավելի քան չորս տասնյակ համալսարանների հետ համագործակցության հուշագրեր ունի ստորագրած: Այդ հուշագրերի շրջանակներում պարբերաբար կազմակերպվել են համատեղ գիտական տարաբնույթ միջոցառումներ:

«Ինչ վերաբերում է միջազգային համագործակցությանը, ապա ԱրՊՀ-ին պարբերաբար հրավիրում են մասնակցելու տարբեր միջազգային գիտաժողովների, համալսարանը տարբեր երկրների հետ ունի համագործակցության պայմանագրեր»,- նշել է պրոռեկտորը՝ ընդգծելով միջազգային կազմակերպությունների հետ շփումները ակտիվացնելու և պայմանագրերի շրջանակում Եվրոպայի հետ համագործակցելու անհրաժեշտությունը:

Պրոռեկտորի խոսքով՝ հոկտեմբեր ամսում նախատեսում են կազմակերպել Արցախի մայր բուհի 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով:

ԱՐՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ՍԹԵԹՍՈՆԻ ԱՆՎԱՆ 24-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱԽԱՂԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՓՈՒԼԸ

Հունվարի 21-ին Արցախի պետական համալսարանում մեկնարկել է «Շրջակա միջավայրի պաշտպանության իրավունք» թեմայով միջազգային դատական խաղ-մրցույթի Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային փուլը: Սթեթսոնի և Արցախի պետական համալսարանի նախաձեռնությամբ կազմակերպված դատախաղին Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի իրավագիտություն մասնագիտությամբ սովորող ուսանողները անգլերեն լեզվով դատավիճել են ազգային սահմանները հատող իրավական, էկոլոգիական խնդիրների շուրջ:

Մրցույթին մասնակցել են երեք թիմ՝ Երևանի պետական համալսարանը, Հայ- ռուսական (սլավոնական) համալսարանը և Արցախի պետական համալսարանը, յուրաքանչյուր թիմում ընդգրկված էր երեք ուսանող: Մրցույթի առաքելությունն է նպաստել էկոլոգիական իրավունքի ոլորտում արդյունավետ որոշումներ կայացնելու ունակություն ունեցող երիտասարդ առաջնորդների զարգացմանը:

«Նման դատախաղերը միջազգային հարթակներում կայանալու, լեզվի իմացությունը զարգացնելու, այլ երկրներում այլ իրավաբանների մտածողությունը, ամբողջ աշխարհում իրավունքի տրամաբանությունը և էությունը հասկանալու, ինչպես նաև կայանալու հնարավորություն են տալիս»,- նշել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողուհի Տաթևիկ Սողոյանը՝ ընդգծելով, որ մրցույթին առաջադրված խնդիրները վերաբերում են վերացող տեսակներին:

ԱրՊՀ թիմի մարզիչ Վարդուհի Ավանեսյանի խոսքով՝ ուսանողները ոգևորված և մոտիվացված են, փորձում են ամեն կերպ սովորել ու ներկայացնել իրենց գիտելիքները: «Թիմերի հաղթանակը պայմանավորված է մի քանի չափանիշներով՝ ներկայացնելու արվեստով, հանրային խոսքով, միջազգային իրավունքի և շրջակա միջավայրի իրավունքի վերաբերյալ ընդհանուր գիտելիքներով և որպես իրավաբաններ սեփական կարծիքը ներկայացնելու պատրաստվածությամբ»:

***

«Շրջակա միջավայրի պաշտպանության իրավունք» թեմայով միջազգային դատական խաղ-մրցույթի Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային փուլում հաղթող է ճանաչվել ՀՀ Հայ-Ռուսական համալսարանի թիմը:

Հաղթող և մասնակից թիմերի անդամներին հավաստագրեր է հանձնել ԱրՊՀ գիտության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը:

Ազգային և տարածաշրջանային փուլերի արդյունքում հաջողություն գրանցած թիմերը, այդ թվում նաև ԱրՊՀ թիմը՝ որպես կազմակերպիչ, մասնակցելու են ապրիլի 2-ից 4-ը ԱՄՆ Ֆլորիդա նահանգում կայանալիք եզրափակիչ փուլին:

2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ԱՃԵԼ Է

2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առկա ուսուցման համակարգի քննաշրջանի արդյունքների, 2-րդ կիսամյակի պարապմունքների ընթացքի և նախատեսվող ծրագրերի մասին զրուցել ենք ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանի հետ:

«2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առկա ուսուցման համակարգի քննաշրջանի արդյունքներով ակադեմիական առաջադիմությունը նախորդ ուսումնական տարվա համեմատ աճել է: Բանասիրական ֆակուլտետի բացարձակ առաջադիմությունը նախորդ ուսումնական տարվա առաջին կիսամյակի համեմատ աճել է 6%-ով, բնագիտական ֆակուլտետինը՝ 6%-ով, մանկավարժության և սպորտինը՝ 3%-ով, պատմության և իրավագիտության ֆակուլտետի առաջադիմությունը պահպանվել է, իսկ տնտեսագիտության ֆակուլտետինը նվազել է 2%-ով»,- նշել է պրոռեկտորը՝ հավելելով, որ նվազել են անբավարար գնահատականներ ստացող և չներկայացած ուսանողների թիվը, աճել գերազանց գնահատականներ ստացած ուսանողների թիվը:

Այս ուսումնական տարվա ընթացքում մեծ ուշադրություն են դարձրել ոչ մանկավարժական փորձուսուցման անցկացման գործընթացին: «Հիմա պարտադրել ենք ուսանողներին 6 ակադեմիական ժամ անցկացնել փորձուսուցման վայրում, բացի այդ ղեկավարները մանրամասն նկարագրել են փորձուսուցման ամեն օրվա ուսանողի անելիքները, որը տարիներ առաջ բացակայում էր»,- ասել է Գ.Սահակյանը՝ ընդգծելով, որ նշված փոփոխությունը գործատուների հետ կապ հաստատելու և փորձուսուցումն ավելի արդյունավետ դարձնելու մեծ հնարավորություն է տալու:

Խոսելով 2-րդ կիսամյակի ընթացքում նախատեսվող ծրագրերից՝ Գեորգի Սահակյանը նշել է. «Անցած կիսամյակում ոչ մասնագիտական խմբերում որակի ապահովման կենտրոնի հետ միասին դասալսումներ ենք կազմակերպել «Ռուսաց լեզու» և «Հայոց լեզու» դասընթացների շրջանակում՝ տեսնելու, թե ինչ փոփոխություններ կան, արդյոք օգտագործում են դասավանդման ժամանակակից մեթոդները, դասավանդումը կապված է ապագա մասնագիտության հետ»,- ասել է նա՝ ընդգծելով, որ ամբիոններին առաջարկել են քննարկել և փոփոխել առարկայական նկարագրերն ու օրացուցային պլանները: Պրոռեկտորը հավաստիացրել է, որ այս կիսամյակում էլ նախատեսում են դասալսումներ իրականացնել «Հայոց պատմության հիմնահարցեր» դասընթացի շրջանակում, կազմակերպել կլոր սեղաններ, հրավիրել գործատուներին, համատեղ քննարկել գործող ուսումնական պլանները՝ ուսանողների գիտելիքները աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԱՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Հունվարի 23-ին ԱՀ ոստիկանության ծառայողները հանդիպել են մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստության ամբիոնի հեռակա ուսուցման համակարգում տարբեր մասնագիտությամբ սովորող ուսանողների հետ:

Հանդիպման նպատակն էր ոստիկանության համակարգում աշխատանքի ընդունվելու պահանջներին և կարգին ծանոթացնելը, աշխատանքի առաջարկ ներկայացնելը:

Ոստիկանության կադրերի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Արմեն Բաղրյանի խոսքով՝ թափուր աշխատատեղեր կան պետական պահպանության վարչությունում, որը իրականացնում է բանկերի և հատուկ օբյեկտների պահպանություն և պարեկապահակետային ծառայությունում՝ վստահեցնելով, որ ծառայության ընթացքում ձեռք բերած գիտելիքներին համապատասխան հետագայում կառաջարկվեն սպայական պաշտոններ:

Մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դեկան Շահեն Այդինյանը նշել է, որ հասարակության մեջ պետք է լինեն պատրաստված, կարգ ու կանոն պահպանող ծառայողներ և կարևորել հանդիպման անհրաժեշտությունը: